«Կառլեն Եսայանի անվան
պոլիկլինիկա» ՓԲԸ

ЗАО
"Поликлиника им. Карлена Есаяна"

Երևան-14, Ներսիսյան 7/1, հեռ. 28 – 63 - 20

Ереван-14, Нерсисяна 7/1, тел. 28 – 63 - 20

N 363
«30» 06 2021թ.

<<Էյ Էյ Ջի Հոլդինգ>> ՍՊԸ-ի
տնօրեն՝ Ա.Հարությունյանին

aag.holding.armenia@gmail.com

Հարգելի տիկին Հարությունյան

Հայտնում ենք Ձեզ, որ <<Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ և <<Էյ Էյ Ջի Հոլդինգ>> ՍՊԸ-ի միջև 29.01.2021թ-ին կնքված ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ՄԱՔ-21/10 / Պայմանագիր / ծածկագրով պայմանգրի շրջանակներում <<Էյ Էյ Ջի Հոլդինգ>> ՍՊԸ-ի կողմից մատուցվող մաքրման ծառայությունները կատարվում են ոչ պատշաճ և մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագրում ներկայացված պահանջներին:

Պատվիրատուն 23.06.2021թ N347 գրությամբ <<Էյ Էյ Ջի Հոլդինգ>>ՍՊԸ-ին առաջարկել է 3 աշխատանքային օրվա ընթացքում շտկել առաջացած թերությունները, սակայն այն չի շտկվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.11-րդ կետը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ՄԱՔ-21/10 ծածկագրով Պայմանագիրը:

Կատարողի կողմից՝ որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրեր Հավելված 4.2 և Հավելված 5,1/ կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվի Կատարողի կողմից ներկայացված Բանկ:

<<Էյ Էյ Ջի Հոլդինգ>> ՍՊԸ-ին <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում են, որ Պայմանագիրը կհարմարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

<<Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի

տնօրեն՝ Ա.Սիսոյան